

ԱՐԹՈՒՐ ԷԴԱՐ

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

(Անավարտ դրամա, որ շարունակվում է մի հոգու համար)

ԵՐԵՎԱՆ 2004

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՍԱՏԱՆԱ

ՀՈԳԻ

Գործողության վայրը՝ Դժոխք: Պայմանով, որ այն նման է նկարագրվածին:

Կիսախավար, անհատակ փոս: Սատանան և հոգին գահավեժ սլանում են ներքև:

ՀՈԳԻ - (Սարսափահար ճչալով): Ա -ա-ա՛ ... Ա -ա-ա՛ ... Ա -ա-ա՛ ...

ՍԱՏԱՆԱ - (Ներվային): Լսիր, հերիք է ճչա...

ՀՈԳԻ - (Հազիվ շնչելով): Ի-ի-ինչպե՞ս... (Ներքև նայելով): Ա -ա-ա՛ ...

ՍԱՏԱՆԱ - Վերջ տուր, լսո՞ւմ ես...

ՀՈԳԻ - (Դառնալով դեպի Սատանան, մի պահ լռում է, սակայն ներքև նայելով սկսում է կրկին ահաբեկված ճչալ): Ա-ա-ա՛ ... Ա-ա-ա՛ ...

ՍԱՏԱՆԱ - (Ազդեցիկ): Դե վերջ տուր, գրողը տանի և ինձ լսիր...

ՀՈԳԻ - (Շունչը կտրվելով): Չեմ-չեմ-չե՛մ կա-ա-ա-րո՞ղ...

ՍԱՏԱՆԱ - Կարող ես, կարող, միայն թե փորձիր ներքև չնայել:

ՀՈԳԻ - (Սարսափած նայելով Սատանայի դեմքին): Ը-հը... Կը-ը փոր-ձեմ... (Աչքը ներքև գցելով): Ա-ա-ա՛, չե-եմ կա-ա-րո՞ղ...

ՍԱՏԱՆԱ - Քեզ ի՞նչ ասացի՝ ներքև մի նայիր... (Հոգին պլշած նայում է նրան): Այ այդպես, ապրես: Նորից եմ ասում՝ ներքև չնայես...

ՀՈԳԻ - (Վախվորած): Չե՛ -ել չեմ նայի... Ինչ ահավոր է...

ՍԱՏԱՆԱ - Հա, բա՞ ... Դժոխք է, դու ի՞նչ ես կարծում:

ՀՈԳԻ - Անկեղծ որ ասեմ, չէի մտածում, թե Դժոխք ընկնելը պետք է հասկանալ բառացի կերպով...

ՍԱՏԱՆԱ - Ես չհասկացա միտքը ասածիդ...

ՀՈԳԻ - Դե, ճանապարհը Դժոխքին տանող, ինչքան հասկացա, ոչ թե քայլելով, կամ մագլցելով, կամ թե սողալով մարդ պիտի անցնի, այլ հենց ընկնելով: Ու ստացվում է ճիշտ այն վարկածը, թե մարդ մեռնելով Դժոխք է ընկնում...

ՍԱՏԱՆԱ - Մասամբ է միայն քո ասածը ճիշտ: Ընդհանուր առմամբ մի թյուր կարծիք է... Այո, բարեկամ, դու ոչ թե ճամփին, այլ Դժոխքում ես, հենց նրա միջին... (Հոգին հետաքրքրասիրության բնազդով աչք է ածում փոսի պատերին: Այն է, ուզում է

ներքն նայել)... Ներքն չնայես... Ինչքա՞ն քեզ ասեմ, ներքն մի նայիր, որ չվախենաս, թե չե՛ կկապվի լեզուդ այդ վախից և մենք չենք հասցնի իրար հասկանալ...

ՀՈԳԻ - Լավ... Ես կփորձեմ... Ինձ վարժվել է պետք...

ՍԱՏԱՆԱ - Եվ շուտ է պետք, շուտ:

ՀՈԳԻ - Ձեզ չհասկացա... Դուք շտապո՞ւմ եք, հա՞...

ՍԱՏԱՆԱ - Բհարկե, անշուշտ՝

ՀՈԳԻ - Բայց ինչո՞ւ և ո՞ւր...

ՍԱՏԱՆԱ - Պարզ չե՞, թե ինչու: Ես հո չե՞մ կարող ամբողջ ժամանակ քո կողքին լինել: Շատ եմ զբաղված... Դե, գիտես, Դժոխք է, հազար այցելու ամեն մի վարկյան ինձ է սպասում...

ՀՈԳԻ - Ես չհասկացա, Դուք ի՞նչ է, մենա՞կ եք բոլորին հսկում...

ՍԱՏԱՆԱ - (*Մտազբաղ*): Ցավոտ հարց տվիր... Այո, մենակ եմ... Հոգիս դուրս եկավ, գրողը տանի... Եվ գիտե՞ս ինչն է ինձ զայրացնողը... Աստծո անունով ձեր Երկրի վրա ինչ ասես, որ կա... տարբեր կրոններ, հազարներ հասնող եկեղեցիներ, միլիոն քահանա... Բայց արի ու տես, որ մարդիկ էլի այստեղ են գալիս... Կրակն եմ ընկել...

ՀՈԳԻ - (*Ձարմացած*): Դու-ու՞ք... կրա՞կն ընկել... Բայց իմանալով՝ մեզ պիտի այրեք...

ՍԱՏԱՆԱ - Դու էլ միամիտ և շատ հիմարն ես, ինչպես բոլորը՝ ով քեզնից առաջ այստեղ է ընկել... Կարո՞ղ ես ասել, թե ինձ որտեղի՞ց այդքան վառելիք, որ ձեզ բոլորիդ ես կրակի տամ... Ախր հասկացիր, դու մենակ հո չե՞ս: Միլիարդներ եք դուք, պատկերացնո՞ւմ ես... Արևն էլ թեկուզ գրպանս պահեմ, ձեզ չեմ հասցնի խորոված անել...

ՀՈԳԻ - Ա-այո, հասկացա...

ՍԱՏԱՆԱ - Այ ապրես, խելոք ես... հիմա քեզ արագ կծանոթացնեմ Դժոխքի կյանքին և շուտ կգնամ:

ՀՈԳԻ - (*Պատրաստակամ*): Ես Ձեզ լսում եմ...

ՍԱՏԱՆԱ - Ուրեմն այսպես, ինչպես հասկացար, կրակներ, հրդեհ, այստեղ չի լինի...

ՀՈԳԻ - Դա-ա շատ հուզիչ է և ուրախացնող...

ՍԱՏԱՆԱ - (*Անակնկալի եկած*): Այսինքն ինչպե՞ս...

ՀՈԳԻ - Դե, մարդ տանջելու Ձեր մեթոդը խիստ տարբերվում է այն իմ լսածից, և ես հուզվեցի, որ գերծ կմնամ այդ անմարդկային չարչարանքներից...

ՍԱՏԱՆԱ - (*Կանխելով*): Նախ՝ ինձ շողոքորթելն անիմաստ գործ է: Երկրորդ՝ դու մարդ չես, այլ հոգի: Եվ մի՛ մոռացիր, դու Դժոխքում ես...

ՀՈԳԻ - Հա, հասկանում եմ: Այլ կերպ որ ասենք՝ փլավ չեք բաժնում...

ՍԱՏԱՆԱ - Շատ սրամիտն ես: Եվ ապրես, որ ինձ ճիշտ ես հասկանում... Ուրեմն լսիր, քեզ բաժին կյանքը դու պիտի ապրես այսպես ընկնելով...

ՀՈԳԻ - (*Ապշահար*): Ի-ինչպե՞ս... Մինչն ե՞րբ...

ՍԱՏԱՆԱ - Մինչն որ հասնես Ապաշխարության փոսի հատակին:

ՀՈԳԻ - Ապաշխարության փոսի հատակի՞ն...

ՍԱՏԱՆԱ - Այո, որ հետո, եթե դա լինի, այնտեղից ուղիղ դու Դրախտ գնաս:

ՀՈԳԻ - Դը-ըրախտ ասում եք...

ՍԱՏԱՆԱ - Հա, Դրախտ, Դրախտ:

ՀՈԳԻ - Իսկ ինչո՞ւ ա-ասիք՝ եթե լինի...

ՍԱՏԱՆԱ - Բանն ահա թե ինչումն է: Մինչև հասնելը Ապաշխարության Փոսի հատակին, դու պիտի գործած քո բոլոր մեղքերը մեկ առ մեկ հիշես ու ապաշխարես, որ մաքրես Հոգիդ: Եվ լավ իմանաս, մինչև մեղքերից չմաքրես հոգիդ, հատակ չի լինի, և ոչ էլ՝ Դրախտ:

ՀՈԳԻ - Իսկ ինձնից առաջ եղե՞լ է մեկը, որ Դրախտ գնար...

ՍԱՏԱՆԱ - (*Տրտմելով*): Ցավն էլ հենց այն է, որ ինչքան եկաք, այդքան մնացիք... Իսկ ես հոգնում եմ... Ես էլ ուժ չունեմ... Ես էլ չեմ կարող ձեր նազ ու տուգի և մեղքի համար այսպես տանջվել: Հոգնել եմ, հոգնել, դու հասկանո՞ւմ ես...

ՀՈԳԻ - Հասկանում եմ Ձեզ...

ՍԱՏԱՆԱ - Անիմաստ գործ է իմ աշխատանքը... Այնքան աճեցիք և մեղքի չափը այնքան շատացավ, որ Դժոխքին տեղ չի անում արդեն: Ես էլ, թե անձիս համբավը թողած՝ ինքս ինձ նայեի, պիտի թքեի և հեռանայի ձեր կողքից հավետ...

ՀՈԳԻ - (*Անկեղծ միջամտելով*): Այդ մեկը չարժե.

ՍԱՏԱՆԱ - Ես ինքս էլ գիտեմ...

ՀՈԳԻ - Խորհուրդ չդիտվի թող իմ ասածը, բայց Ձեզ կարծես թե օգնական է պետք...

ՍԱՏԱՆԱ - Մի հարցնող լինի՝ այս աշխատանքին ո՞վ կդիմանա... Առանց մի վայրկյան հանգստի, քնի՝ Հոգի ընդունիր, հա փոսը նետիր, հետո էլ դու ընկիր և պարզաբանիր, թե ինչն - ինչոց է, թե ինչպե՞ս անի... Մի խոսքով Դժոխք, իսկական Դժոխք...

ՀՈԳԻ - Այո, դժվար է...

ՍԱՏԱՆԱ - Դժվարն էլ խո՞սք է... Ու դեռ չեմ ասում այն բանի մասին, որ այսքան հոգու ձեռքին տանջվելով, էլի իմ մասին ձեր Երկրի վրա միշտ վատն են խոսում... Հենց մի վատ բան է կատարվում այնտեղ, իսկույն անունս են պահի տակ հիշում: Մատանան արեց, Մատանան գիտե, Մատն էր Մատանի խառը էս գործին...: Ականջս օրն ի բուն զնգում է, գիտե՞ս, էլ չեմ դիմանում ահավոր ցավին...

ՀՈԳԻ - (*Խղճահարվելով*): Կարեկցում եմ Ձեզ...

ՍԱՏԱՆԱ - Շնորհակալ եմ շատ... Այ, օրինակ դու, ինքդ տեսնում ես, թե ինչ ահռելի գործ եմ կատարում: Ասա ինձ, բա ես ժամանակ ունե՞մ ձեր այդ երկրային գործերին խառնվեմ:

ՀՈԳԻ - Չեմ կարծում, չէ, չէ...

ՍԱՏԱՆԱ - Ահա, տեսնո՞ւմ ես... (*Ականջը ցույց տալով*): Այ, նորից զնգաց...

ՀՈԳԻ - Ես իսկապես էլ Ձեզ հասկանում եմ և կուզենայի Ձեր գործին օգնել:

ՍԱՏԱՆԱ - Անչափ շոյված եմ Ինչքան շուտ մաքրես քո Հոգին մեղքից, այնքան ինձ համար բարի գործ կանես:

ՀՈԳԻ - (*Քիչ անհամարձակ*): Ինձ չհասկացաք... Ես կուզենայի Ձեզ հետ աշխատել...

ՍԱՏԱՆԱ - (*Անակնկալի գալով*): Ինչպե՞ս... Ինչ անե՞լ...

ՀՈԳԻ - Դե, թեկուզ, ասենք, որպես օգնական...

ՍԱՏԱՆԱ - Ես չհասկացա... Անկեղծ եմ ասում... Դու ի՞նչ ես ուզում:

ՀՈԳԻ - Որ ինձ Դժոխքում մի աշխատանք տաք...

ՍԱՏԱՆԱ - Իսկ ավելի պա՞րզ...

ՀՈԳԻ - Դե, ինչպե՞ս ասեմ... Գործի ընդունեք որպես օգնական...

ՍԱՏԱՆԱ - Որպես օգնակա՞ն...

ՀՈԳԻ - Այո, օգնական...

ՍԱՏԱՆԱ - Ի՞նձ ... Սատանայի՞ ս...

ՀՈԳԻ - Այո, Ձեզ... Ը... հենց Ձեզ:

ՍԱՏԱՆԱ - Դու լո՞ւրջ ես ասում:

ՀՈԳԻ - Միանգամայն լուրջ: Ես գործի մարդ եմ:

ՍԱՏԱՆԱ - (*Հոգու դիտավորությունը հասկանալով*): Ախ գործի մարդ ես...

ՀՈԳԻ - Այո, գործի մարդ:

ՍԱՏԱՆԱ - (*Հետը խաղալով*): Եվ դու, գործի մարդ, ուզում ես հավերժ մնալ Դժոխքո՞ւմ...

ՀՈԳԻ - Այո, իսկ ի՞նչ կա...

ՍԱՏԱՆԱ - Դրախտ չես ուզում...

ՀՈԳԻ - Իսկ ասացեք ինձ, ի՞նչ եմ կորցրել ես այդ Դրախտում

ՍԱՏԱՆԱ - Ես ի՞նչ իմանամ... Դուք բոլորդ դա երազում եք շատ...

ՀՈԳԻ - Իսկ ես չեմ ուզում:

ՍԱՏԱՆԱ - (*Կտրուկ*): Իսկ քեզ չեն հարցնում:

ՀՈԳԻ - (*Հիասթափ*): Ինչպե՞ս...

ՍԱՏԱՆԱ - Հենց այդպես, գործի մարդ... Խորամանկն ես, հա... Դու չե՞ս հասկանում, որ Դժոխքում ես, Ապաշխարության անտակ փոսի մեջ...

ՀՈԳԻ - Հասկանում եմ Եվ ի՞նչ...

ՍԱՏԱՆԱ - Այն, որ Դժոխքում, ինչպես դու ասիր, փլավ չեն բաժնում... Քեզ բաժին գործը ապաշխարելն է, դու չե՞ս հասկանում... Մի սրան նայեք, ինչ է երազում...

ՀՈԳԻ - (*Խեղճացած*): Ի՞նչ ասացի որ...

ՍԱՏԱՆԱ - Մեղքի մեջ կորած, բայց էլի մեղք ես մտքում որոճում: Կուզես պե՞տ դառնալ քեզ նման դժբախտ հոգիների մեջ...

ՀՈԳԻ - (*Արդարանալով*): Ես չասացի պետ, ասի օգնական:

ՍԱՏԱՆԱ - Ինձ՝ հա, իսկ նրա՞նց...

ՀՈԳԻ - Նրանց էլ նույնը: Սոսկ պիտի օգնեմ վիճակն այս հասկանան...

(*Շարունակելով համոզել*): Տեսաք չե՞, թե ինչքան ընդունակ եմ ես: Հեչի պես վարժվեցի ընկնելու վախին...

ՍԱՏԱՆԱ - (*Մտքերի մեջ ընկնելով*): Ասում ես օգնե՞ս...

ՀՈԳԻ - (*Ոգևորվելով*): Այո, բա ինչպե՞ս... Ես էլ մարդ եմ, չէ՞. նրանց կես խոսքով ճիշտ կբացատրեմ...

ՍԱՏԱՆԱ - Մարդ չես, այլ Հոգի... (*Ինչ-որ բան որոշած*): Բայց կարևոր չէ: Քո ասածի մեջ մի ինչոք բան կա:

ՀՈԳԻ - (*Ուրախացած*): Ահա, տեսնո՞ւմ եք...

ՍԱՏԱՆԱ - Քեզ նմաններին, իսկ դուք բոլորդ եք այդպես լպրծուն, Ապաշխարության էլ ոչ մի փոսի արժանի չանել...

ՀՈԳԻ - Հապա ի՞նչ լինի:

ՍԱՏԱՆԱ - Մեկ ուրիշն իմ տեղը քեզ իսկույն կասեր, Սատանան գիտե: Բայց քանի որ ես, հենց կամ Սատանան, ինքս քեզ կասեմ... Դրախտ կուղարկեմ:

ՀՈԳԻ - Մեղավոր հոգո՞վ...

ՍԱՏԱՆԱ - Իսկ ի՞նչ կլինի... Մի քիչ էլ Աստված իր հրեշտակներով թող ձեզ հետ տանջվի: Մեկ է, դուք մեղքից ձեռք քաշողը չեք:

ՀՈԳԻ - Ինչո՞ւ, մի՛ ասեք...

ՍԱՏԱՆԱ - (*Ջղայիկ*): Գրողը տանի, արդեն մի կյանք է, ինչ քեզ հետ այստեղ, այս փոսը ընկած, մեղքը քավելու ձեն եմ բացատրում: Իսկ դո՞ւ, իսկ դո՞ւ ինչ...

ՀՈԳԻ - Բայց ես ի՞նչ, ես ի՞նչ...

ՍԱՏԱՆԱ - Իսկ դու, փոխանակ մեղքերդ քավես ու ապաշխարես, ինձ գործից կտրելու ամեն տեսակ ելք ես քեզ փնտրում պատիժը հաճույքով փոխելու համար...

ՀՈԳԻ - Բայց ինքներդ ասիք, որ աշխատանքը Ձեր դժվար է, շատ բարդ, Դժոխք է, Դժոխք...

ՍԱՏԱՆԱ - Այո, ինձ համար... Այ, իսկ քեզ համար՝ Դրախտ կդառնա:

ՀՈԳԻ - (*Հանձնվելով*): Լավ ներող եղեք, էլ բան չեմ ասի:

ՍԱՏԱՆԱ - (*Հազիվ իրեն զսպելով*): Ճիշտ է, Դժոխք է, Բայց չհայհոյես...

ՀՈԳԻ - Բայց ես ի՞նչ ասի...

ՍԱՏԱՆԱ - Չասացի՞ր... Ներեք:

ՀՈԳԻ - Ասացի... և ի՞նչ...

ՍԱՏԱՆԱ - Այն, որ ներելը Աստծո գործ է խիստ: Իսկ իմը՝ պատժելը, պատժելը, հասկանո՞ւմ ես...

ՀՈԳԻ - (*Պարզամտորեն*): Հասկացա... Ոչինչ, բոլոր դեպքերում միշտ ներող եղեք...

ՍԱՏԱՆԱ - (*Հուսահատ*): Գրողը տանի, այս ի՞նչ պատիժ էր, Աստված ինձ տվեց... (*Թախծելով*): Երբ ես նոր դարձա այս Դժոխքին պետ, կյանքը ըմբոստիս թվաց մի արկած՝ լի խռով կյանքին հատուկ արբունքով... Մեղավոր Հոգիք, իմ թյուր կարծիքով, որ այստեղ գային, պիտի լցնեին Դժոխքը՝ ամենն իր ապրած հաճույքի ցավով: Լային, ոռնային, կամ լուսնին նայող մենակ գայլի պես խուլ կաղկանձեին... Ընկած հոգիներ, որ փոսը ընկած, կրկին ընկնելով, պիտի հիշեին իրենց մեղքերը, պիտի զղջային... Բայց, ավաղ, Հոգին նույն մարդու նման բանական է, կեղծ, իր գոյը պաշտող, այն արդարացնող... Նա երբեք,

երբեք չի գա այն մտքին, որ մեղք է գործել... Երբեք չի պատմի... Երբեք չի զղջա... Երբեք չի զղջա...

ՀՈԳԻ- (Միամիտ անկեղծությամբ): Ձեզ ցավակցում եմ...

ՍԱՏԱՆԱ - (Ցավոտ): Ինձ ձե՞ռք ես առնում...

ՀՈԳԻ - Օ, ի՞նչ եք ասում, ինչպե՞ս կարող եմ...

ՍԱՏԱՆԱ - Չէ, դուք կարող եք և ձեզ ոչ մի բան՝ Դժոխք, թե Դրախտ, կարգի չի բերի: Դուք եղել եք, կաք, այդպես էլ կմնաք՝ կեղծ ու բանական...

ՀՈԳԻ - (Ցուցադրական կարեկցանքով): Իզուր եք խառնում Ձեր հոգին իրար: Դո՞ւք ինչ մեղք ունեք...

ՍԱՏԱՆԱ - Բայց ձեր մեղքերի երեսից է, չէ, որ ես այսպիսի մեղկ վիճակում եմ...

ՀՈԳԻ - (Խեղճացած): Բայց մենք էլ ենք մեղկ...

ՍԱՏԱՆԱ - (Չարմացած): Ասում ես՝ դո՞ւք էլ...

ՀՈԳԻ - Ախր հասկացեք, Դուք ճիշտ եք ասում, որ մենք այն կյանքում մեղք շատ ենք գործում: Բայց թե ի՞նչ անենք, Աստված է փորձում...

ՍԱՏԱՆԱ - Բայց դուք գիտեք, չէ՞, որ փորձություն է...

ՀՈԳԻ - Հա, բայց Աստծո դեմ գիտեք, խաղ չկա... Ինչպես էլ վարվես՝ միշտ մեղքի մեջ ես... Գիտեք թե հե՞շտ էր դրան դիմանալ...

ՍԱՏԱՆԱ - (Բարկացկոտ): Ինչ էլ որ լինեք, դիմանալ էր պետք փորձությանն Աստծո, որ ինձ կրակը չզցեք այսպես... Ես մեկ, դուք միլիարդ, և չեք հասկանում, որ չարիքի մեջ կյանքը խեղդելով Դժոխքը նույնիսկ Դրախտ եք դարձնում... Այ դու, օրինակ դու, ինչպե՞ս ես կարծում, Դժոխքո՞ւմ է հեշտ, թե՞ ձեր այն կյանքում...

ՀՈԳԻ - Անկեղծ որ ասեմ, Դուք չե՞ք զայրանա...

ՍԱՏԱՆԱ - Ես արդեն վարժվել եմ:

ՀՈԳԻ - Ճիշտը որ ասեմ, Դժոխքում, ինչքան ես դա հասկացա, շատ ավելի հեշտ է...

ՍԱՏԱՆԱ - Ահա, տեսնո՞ւմ ես... (հուսահատության մեջ ընկած): Եվ ես չեմ կարող... Ես էլ չեմ կարող... Ես քեզ լքում եմ...

ՀՈԳԻ - Բայց ո՞ւր եք գնում առանց ասելու, թե մեղքիս ինչպե՞ս թողություն գտնեմ...

ՍԱՏԱՆԱ - (Չարմացած): Ասացիր ինչի՞ն, ես չլսեցի...

ՀՈԳԻ - Մեղքերիս, ասի, թողություն խնդրեմ...

ՍԱՏԱՆԱ - Մեղքերի՞դ... (Հոգու հետ խաղալով): Ինչպե՞ս, Դու մե՞ղք ես գործել...

ՀՈԳԻ - (Չարմացած): Այո... Լիքը կյանք...

ՍԱՏԱՆԱ - Չե՛մ հավատում, չե՛... Դու կատակում ես: Դու խա-աղ ես անում...

ՀՈԳԻ - Ինչպե՞ս... Եվ ո՞ւմ հետ...

ՍԱՏԱՆԱ - (Ցասկոտ): Ինձ հետ... Սատանի...

ՀՈԳԻ - Վայ, ի՞նչ եք ասում, ինչպե՞ս կլինի...

ՍԱՏԱՆԱ - Իսկ ինչպես է, որ ես, միշտ, ամեն անգամ, ամեն հոգու հետ գժվում եմ, մեռնում... հերիք չե՞, ասեք, հերիք չե՞ դուք գաք ու իմ կոկորդում փշի պես խրվեք... հերիք է, հերիք... Ինչքա՞ն կարող եմ ես ձեզ փոս փորել... Տեղ էլ չմնաց,

փոսի տեղ չունեմ Նոր փոս եմ փորում հին հոգու վրա: Աստված իմանա էլի կպատժի...

ՀՈԳԻ - Ինչպե՞ս կպատժի...

ՍԱՏԱՆԱ - Դե, դու ... տեղյակ չես... Ուզում էր շուտով փակել Դժոխքը... Աշխարհի վերջն է ահա մոտենում... Բայց այսպես գնաց՝ հաստատ կթողնի, հաստատ Դժոխքին մատով չի դիպչի... Ու... Ու այն կմնա... Ու... ես կմնամ, էլի կլծվեմ անիծյալ գործին...

ՀՈԳԻ - (*Կարեկցանքով*): Ի՞նչ ասեմ, Աստված համբերություն տա...

ՍԱՏԱՆԱ - (*Մեկից փոխվելով*): Այ, դա միտք էր, միտք: Գիտեմ, որ մի բան ինձ հետ այնպես չէր, Բայց գլխի չընկա... Ապրես, գործի մարդ, դու ինձ փրկեցիր: Համբերությունս էր սպառվելու վրա... Դե ի՞նչ, շուտ գնամ և լիցքավորվեմ... (*Թռչում է վերև*):

ՀՈԳԻ - (*Անակնկալի եկած*): Սպասե՛ք, այդ ո՞ւր... Բան չհասկացա, կարծես թե գժվեց... Բայց լինո՞ւմ է, որ Սատանան գժվի... Չէ, հա... Երևի... Մեր մեջը ասած խիստ տարօրինակ է ձևն այս Դժոխքի՝ Գլուխ չես հանի և բացառված չէ, որ խելագարվես... Օրինակ ես: Ինչպե՞ս վարժվեմ վիճակիս... Ես ի՞նչ եմ անում... Պարզ է, այս պահին ներքև եմ ընկնում... (*Վախից սառելով*): Ներքև՞ եմ ընկնում... (*Նայում է ներքև*): Ա -ա-ա՛ ... Ա -ա-ա՛ ... Ա -ա-ա՛ ...

ՎԵՐՋ